

ՊԵՐՃԱԽՈՍ ԼՌՈՒԹՅԱՆ ԱՍՊԵՏԸ

Posted on February 9, 2022 by Keghart




Category: [Opinions](#)



Սամվել Խալաթյան, Երևան, 22 Հունվար 2022

Արվեստի բարձրակարգ գործերի առջև մենք համրանում ենք՝ տրվելով մեր խոկումներին, քանզի, բացառիկ, ազնվագույն ոգեղենությունը պարտադրում է մեզ ինչ-որ մի կարճ ժամանակահատվածում ներքին պերճախոսությամբ լռություն պահպանել: Դա այն լռությունն է, ինչպես Մեծ պայթյունին նախորդած վայրկյանը...

Ահա այսպիսի լռություն է պարտադրում մեզ ՀՀ ժողովրդական նկարիչ, քանդակագործ Անատոլի Ավետյանն իր ստեղծագործություններով: Բայց, նախ՝ իր մասին. ծնվել է 1952 թվին՝ Սիբիրում, բռնագաղթվածների ընտանիքում: 1967 թվականին տեղափոխվել, հաստատվել են [Կիրովականում](#) (այժմ՝ Վանաձոր): 1969 թվականին ընդունվել է Երևանի [Փանոս Թերլեմեզյանի անվան գեղարվեստի ուսումնարան](#), 1972 թվականին՝ [Թբիլիսիի գեղարվեստի ակադեմիա](#), 1977-ին, գերազանցությամբ ավարտել է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտը: Այդուհետ, նրա կենսագրությունը կարելի համառոտագրել, նշելով՝ փայլուն դրվատանքներով են նշվել նրա բազմաթիվ անհատական և խմբային ցուցահանդեսները Երևանում և Հայաստանի քաղաքներում, Հոլանդիայում, Մոսկվայում, Սանկտ-Պետերբուրգում, Շվեյցարիայում, Ֆրանսիայում, Վաշինգտոնում, Չիկագոյում, Բոստոնում, Լոս-Անջելեսում, Հալեպում, Բելգիայում, Կահիրեյում, այլուր: Ավետյանի աշխատանքներից պահվում են բազմաթիվ անձնական հավաքածուներում, Հայաստանի Ազգային պատկերասրահում, Ազգագրական թանգարանում, Փարաջանովի տուն-թանգարանում, գեղարվեստի ֆոնդում, ՀՀ նախագահական պալատում, Ամենայն Հայոց Կաթողիկոսի նստավայրում, Փարիզի քաղաքապետարանում, Հռոմի Պապի հավաքածուում, Բոստոնի ԱԼՄԹ թանգարանում, հանդիսանում են ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Ֆրանսիայի և այլ երկրների նախագահների սեփականությունը:



«Սպիտակ գլխարկ», 2005 թ., ստվարաթուղթ, յուղաներկ (85x105)

«Խաչակիրը», 1996 թ., կտավ, յուղաներկ, (100x100)**«Բարի լուր», 2015 թ., ֆաներա, այրումին, յուղաներկ, (150x300)**


Գեղարվեստ մուտք գործելու առաջին իսկ քայլերից, ազդեցություններից զուրկ, յուրօրինակ, իր սեփական ոճն ու կատարողական ինքնատիպությունն ունեցող արվեստագետ Է Անատոլի Ավետյանը: Նրա կտավներն իրենց գունային մաքրությամբ ու քնարական շնչով թարմ հոսանք բերեցին Հայաստանի նկարչական գունեղ անդաստանում: Անկախ ստեղծման տարեթվերից, Ավետյանի գեղանկարչական աշխատանքները ներկայանում են գեղագիտորեն թարմ ու առինքնող, նաիրյան շենշողությամբ, կատարյալ և անթերի ավարտուն:

Անցած դարի 60-70-ական թվականներին, Հայաստանում, բուռն կերպով ծաղկում ապրեց մետաղի դրվագման արվեստը: Դրան, թերևս, նպաստեց նաև այն, որ խորհրդային երկրում մեկը մյուսի ետևից բուլժիկ գործիչների և պատմական իրադարձությունների հորեյաններ էին նշվում, և իշխանությունները շռայլորեն պատվերներ էին տալիս կերպարվեստագետներին՝ դրվագելու բոցաշունչ լենինյանների, ֆաշիզմին հաղթած բանակի, կոմունիզմ կառուցող և տիեզերք նվաճող դասակարգի կերպարները: Պետական-հասարակական հիմնարկների փողոցահայաց պատերի վրա և ընդարձակ ճեմասրահներում դրվագումներ հայտնվեցին, որոնք ստեղծագործական որոշակի դրսևորումներ ունենալով հանդերձ, իրենց գաղափարական դերով չմերվեցին, չդարձան հանրության գեղագիտական ճաշակի խորհրդանիշեր: Նշենք, որ մետաղի վրա դրվագման ալիքը, այդուհանդերձ, նպաստեց մի քանի տաղանդավոր վարպետների կողմից ազգային թեմատիկայով և հովվերգական մնայուն կոթողներ ստեղծելուն, լայն պահանջարկ ունեցող տարատեսակ հուշանվերներ արտադրելուն, բայց, ընդհանուր առմամբ, դրա ոգևորությունը կարճ տևեց:

Եվ ահա, երբ մետաղի գեղարվեստական դրվագումն այլևս մակընթացության մեջ չէր, տարբեր ցուցահանդեսներում սկսեցին երևալ աշխատանքներ, որոնք իրենց կատարողական ձևերի նորությամբ ու նորարարությամբ, գեղագիտական հնչեղությամբ և բովանդակային եռությամբ նոր սկիզբ ու թարմություն էին բերում: Սկզբից իսկ պարզ դարձավ, որ հանձին նկարիչ Անատոլի Ավետյանի, մետաղի դրվագման հնագույն արվեստը վերակենդանանում և զարգանում է, և այդ հորդուն ընթացքը նկարչի ստեղծագործական ծիրում և հայ դեկորատիվ-կիրառական արվեստի պատմության մեջ մի նոր էջ է բացում:

Անկասկած, նկարչի ճաշակի, հնարամտության, կատարողական մեծ վարպետությամբ գյուտարարության արդյունք են տարբեր նյութերի ներդաշնակ միատեղումը, որոնք անկասելի միտվում են պատկերվածի գեղագիտությունն ու հոգեբանությունը արտահայտելուն: Նյութի (մետաղ, պղինձ, արույր, այրումին, անագ, ներկեր և այլն) բազմազան համակցումներով արարումները Անատոլի Ավետյանի տարերքն են և

գամանակի չէ, որ դավադրումներում գերիշխում է կոթողային կերպն ու բնույթը: Այդ հատկությունն ավելի է ընդգծվում նրա քանդակագործության մեջ, երբ նյութը՝ (օբսիդիան, ապակի, պողպատ, բյուրեղապակի) ծառայեցվիում է միակ՝ գլխավոր կերպարի խորիմաստ վեհությունը ներկայացնելուն:



«Արարատ», 1992 թ., պղինձ, արուլյր, պատինա, (81x73)

«Մեր պահապան հրեշտակը», 2009 թ., սովարաթուղթ, յուղաներկ, պղինձ, (137x185)

«Ստեղծագործում եմ այնպես, ինչպես ցանկանում եմ, ինչ ցանկանում եմ, ինչով ցանկանում եմ»,- ստեղծագործելու իր ազատության մասին ասել է Անատոլի Ավետյանը և դա նրա արվեստի մասին ամենաբնորոշիչն է՝ երբևէ ասված բնութագրումներից:


2012 թվականին Անատոլի Ավետյանն աննախադեպ քայլ արեց՝ ժամանակակից 28 արվեստագետների և հանրության հանդիպումը կազմակերպելով «Իմ ժամանակակիցը» վերտառությամբ գեղանկարչական դիմաշարով:

Այս դեպքում, գեղագիտական արժեքից զատ, նա ի հայտ բերեց մեր ժամանակի ոգեղեն նկարագրի և եության հավաքական կերպարը, որն ամբողջանում է նկարչի առաջարկով բնորոշների կողմից գրված և դիմանկարներին կից ներկայացվող ձեռագիր ուղերձներով:

Լավագույնս ճանաչելով գրականության և արվեստի ժամանակակից գործիչներին, Անատոլի Ավետյանը սկզբից ևեթ նպատակադրվել էր կերտել նրանց բարոյական կերպարը, որը դիտողին պարուրելով գունաշխարհի մեղեդայնությամբ, նրան մղում է խորհելու մաքրագործման և հուսավետության մասին, բարու ընկալման և բարոյական ճշմարիտ արժեքների հարատևության մասին: Այսպիսով, և՛ նկարչի վրձնած

Կերպարներով, և թե՛ նրանց գրավոր խոսքով մենք աներեսվում ենք ոչ միայն ներկա ժամանակի, այլև ամբողջ մի ժամանակաշրջանի մշակութային-հոգևոր ընդհանրական կերպարի հետ:

Դիմաշարը ներկայանում է պարզ ու մտերմիկ, կայտառ տրամադրությամբ, կերպարների խոհուն լավատեսությամբ և յուրաքանչյուրն իր մտորումներով ու զգացմունքներով երկխոսության մեջ է մտնում դիտողի հետ:



«Աստվածամայրը մանկան հետ», 2009 թ., պղինձ, դրվագում, պատինա (100x69)



«Հայաստանում Քրիստոնեության ընդունման 1700 ամյակին», 2000թ., ապակի, բյուրեղապակի, օբսիդիան, պողպատ, (50x60x35)

«Մեր քարերը», 2004 թ., օբսիդիան, (71x25x13)

Անատոլի Ավետյանը հրաժարվել է իր հերոսներին արտաքին զուգվածությամբ ներկայացնելուց: Յուրաքանչյուր կտավում նկարչի, վերջին հաշվով, նաև դիտողի

ուշադրության կենտրոնում կերպարի դեմքն է: Նույնիսկ կանանց՝ դերասանուհիներ
Էվելինա Շահիրյանի, Իրինա Դանիելյանի, Լալա Մնացականյանի, դրամատուրգ
Կարինե Խողիկյանի դիմանկարները, որ աչքի են ընկնում բարեհամբույր
կանացիությամբ, զուրկ են արտաքին արդուզարդից: Այդուամենայնիվ, նրանք
ներկայանում են պերճաշուք ինքնությամբ: Դա մարդու արտաքինի և նրա ոգեղեն
գեղեցկության պատկերման գաղտնի օրենքների բացահայտումն է՝ նկարչության
լեզվով:

Դիմանկարներում գուներանգային պայծառ ու ցայտուն լուծումները, լայն ու համարձակ
վրձնախաղերը՝ բացառիկ արտահայտչականությամբ, յուրաքանչյուրին
առանձնացնում են իրենց բնորոշ բնավորությամբ ու անհատական խառնվածքով:
«Կիլիկիայի» նավապետ Կարեն Բայանի դիմանկարն, օրինակ, հառնում է ալիքվող
կապույտի միջավայրից՝ տարերքի դեմ անհողդողտ ու հաստատակամ կերտվածքով,
երաժիշտ Մալխասի միջավայրը նրա ջազային կենսախինդ երաժշտության գունեղ
ներաշխարհն է, իսկ ինքը՝ դրա ծնունդն ու գլխավոր հերոսը, կատակերգակ Սերգեյ
Դանիելյանի հանրահայտ «յոժիկ» (ոգնի) սանրվածքը դիմանկարում նրա այցետոմսն է
կարծես, իսկ սևեռուն հայացքն ու սեղմված շուրթերով փոքր-ինչ հեզնական ժպիտը
նրա ներհուն խառնվածքն են մատնում, նկարիչ Մարտիրոս Բադայանը պատկերված է
լույս ու ստվերի և նախշազարդ կարպետի ֆոնի վրա՝ արվեստագետի
անհատականությամբ, բանաստեղծ Ռազմիկ Դավոյանի դիմանկարը՝ գունակերպի
զուսպ տոնայնությամբ, դասական խոհականությամբ ու հանդարտությամբ է
ներկայանում, իսկ կատակերգու դերասան Աշոտ Ղազարյանի կերպարը արբշիռ
գունավետությամբ ու վարակիչ կայտառությամբ է լի, և այլն:



Ռազմիկ Դավոյանի դիմանկարը

Անհնար է չհապաղել իր՝ նկարչի ինքնանկարի առջև: Այս շարքում սա միակ նկարն է, որի կերպարում սուր կերպով արտահայտված ներքին խռովք կա: Սա նման չէ մյուսների՝ կինոռեժիսոր Հովիկ Հախվերդյանի խոհուն լրջմտության, դերասան, սցենարիստ և ռեժիսոր Միքայել Պողոսյանի աչալուրջ գնտոդականության, դերասան Չավեն Աբրահամյանի քննող դիտողականության հոգեվիճակներին: Անատոլի Ավետյանի ինքնանկարում իշխող հոգեվիճակը դրամատիզմն է՝ ժամանակի ու բարքերի փոփոխությունների ապրումներով ու մտահոգությամբ: Կտավից սևեռուն հայացքով դիտողին է նայում գունային հատու վրձնախռովքով կերտված ԱՐՎԵՍՏԱԳԵՏԸ, ով մեր ժամանակի խիղճն է, նվիրյալն ու վսեմ իդեալների գաղափարակիրը: Դրանով նա՝ Անատոլի Ավետյանը, իրեն չի առանձնացնում մյուսներից, ընդհակառակը, իր կերպարում ամփոփել է «Իմ ժամանակակիցը» պատումնաշարը՝ ընդհանրացնելով մյուսների բարոյահոգեբանական այն ապրումները, որոնք մեր իրարամերժ ժամանակաշրջանի ծնունդն են:

Մոգություն, կախարդանք կա նկարչի բոլոր ժանրերով արված գործերում: Սակայն, իհնչն է Անատոլի Ավետյանի արվեստի կախարդանքը:

-Լուսինը, պերճախոս լռությունը:

There are no comments yet.